

Ճանապարհ, ժամանակ, արագություն

Միավոր ժամանակում մարմնի անցած ճանապարհը նրա շարժման արագությունն է:

Արագությունը կարելի է չափել արագաչափի միջոցով:



Օրինակ`

Կարող ենք ասել.

Ավտոմեքենան շարժվում է ժամում 70 կմ

արագությամբ, կամ ավտոմեքենան շարժվում է 70կմ/ժ

արագությամբ:

Մարմնի շարժման արագությունը հավասար է նրա անցած ճանապարհի և ծախսած ժամանակի քանորդին:

Այսինքն`

Արագություն= Ճանապարհ : ժամանակ

Մարմնի անցած ճանապարհը հավասար է նրա շարժման արագության և ժախսած ժամանակի արտադրյալին:

$$\text{Ճանապարհ} = \text{Արագություն} \cdot \text{Ժամանակ}$$

Մարմնի ժախսած ժամանակը հավասար է նրա անցած ճանապարհի և արագության քանորդին:

$$\text{Ժամանակ} = \frac{\text{Ճանապարհ}}{\text{Արագություն}}$$

Խնդիրներ.

- Գնացքը 15 ժամում միևնույն արագությամբ անցավ 1200 կմ ճանապարհ: Որքա՞ն էր գնացքի շարժման արագությունը:

$$1200:15=80 \text{ կմ/ժ}$$

- Որքա՞ն ճանապարհ կանցնի ավտոմեքենան 7 ժամում, եթե շարժվի 65 կմ/ժ արագությամբ:

$$65 \cdot 7 = 455 \text{ կմ}$$

- Հեծանվորդը 4 ժամում ընթացավ 20 կմ/ժ արագությամբ: Որքա՞ն ճանապարհ նա անցավ:

$$20 \cdot 4 = 80$$

- Գնացքը 2 օրում միևնույն արագությամբ անցավ 1600 կմ ճանապարհ: Առաջին օրը նա ճանապարհի վրա ծախսեց 13 ժամ, իսկ երկրորդ օրը՝ 6 ժամ պակաս: Որքա՞ն ճանապարհ նա անցավ առաջին օրը:

$$1. 13 - 6 = 7 \text{ ժ}$$

$$2. 13 + 7 = 20 \text{ ժ}$$

$$3. 1600 : 20 = 80 \text{ կմ/ժ}$$

$$4. 13 \cdot 80 = 1040 \text{ կմ}$$

- Հայկենց տնից մինչև դպրոց 320 մ է: Նա դպրոց է գնացել 40 մ/ր արագությամբ: Որքա՞ն ժամանակ նա ծախսեց դպրոց գնալու համար:

$$320:40=8 \text{ ր}$$

- Երևանից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 3 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 70 կմ, իսկ երկրորդը՝ 60 կմ:

$$1. 70 \cdot 3 = 210 \text{ կմ}$$

$$2. 60 \cdot 3 = 180 \text{ կմ}$$

$$3. 210 - 180 = 30 \text{ կմ}$$

- Մոտոցիկլավարը 200կմ ճանապարհի առաջին 80կմ-ն անցավ 40կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 60կմ/ժ արագությամբ: Մոտոցիկլավարը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը:

$$1. 200 - 80 = 120 \text{ կմ}$$

$$2. 80:40=2\text{ժ}$$

$$3. 120:60=2d$$

$$4. 2+2=4d$$